


ԲԱՅԵՆԻԳԻՆ

Ի Պուրկարիա
Տարեկ. 10 ֆր.
Վեցամս. 5 "

Արտասահման
Տարեկ. 12 ֆր.
Վեցամս. 6 "
ԿԱՆԻՒԿ



ՊԱՅՄԱՆՔ

Գրութիւնք եւ
շէն տրուիր

Հասցէ
DIRAN
PAPAZIAN
YILDIZ TABIA
VARNA
BULGARIE

ՇԱՐԱԹԱՅԱՆԴԵՍ. ԱԶԳԱՅԻՆ ԵՒ ԶԱԽԵՇՏԱԿԱՆ

Դ. ՏԱՐԻ

ՅՈՒԼԻՍ 1 ՇԱՐԱԹ 1900

ԹԻԻ 168


ԶՈՒԼԱՐԱՆ

ՏՊԱԳՐԱԿԱՆ ՏԱՌԵՐՈՒ
ՅԱԿՈԲ ԾԵՐՈՒՆԵԱՆԻ

Կը ձուլէ ամեն լեզուէ տպագրական տառեր,
մասնաւորաբար Հայերէն եւ Թուրքերէն, Իսպան,
Քատրաթ, Էնթերլինը, Գիծ եւ Կարնիւթիւր:

Գինը յոյժ գիւրամատչելի: Հասցէ
AGOP DZÉROUNIAN SOPHIA (BULGARIE)

ԴԵՐԱԿԱՏԱՐՆԵՐԸ



Բ.

Արդարացումի ամենափոքրիկ պարագայ մը
չենք տեսներ այն դատապարտելի անհոգութեան
նը մէջ, զոր հայ ծնողքներ ցոյց կուտան իրենց
զաւակաց կրթութեանը նկատմամբ:

Տիեզերքի կենսական մեքենականութեան ա-
պուշ արտադրութիւնը ըլլալ սահմանուած չէ՝
մարդ էակը, որ տիրապետող տարին ըլլալու է
նոյն այդ մեքենականութեան ուրիշ բոլոր արտա-
դրութեանցը վրայ:

Մարդը ուրիշ բարձրութեան մը վրայ պէտք է
գտնուի ուրեմն, որ իրաւունք ունեցած ըլլայ իշ-
խելու իր տրամադրութեան տակ դրուած այդ բո-
լոր տիեզերական ուժերու վրայ արժանապէս:

Ուրիշ կերպով շատ ծիծաղելի կը դառնայ ինք
ու մտրակը ուրիշին ձեռքը կուտայ զինքը վարե-
լու աշխարհի մէջ, միշտ հալածական, միշտ դժ-
բաղդ: Հաւասար կըլլայ այն կենդանիներուն, ո-
րոնք ծնելու բնազդով մը ահագին սերունդներ
կ'արտադրեն, ամենքն ալ ստեղծուած մարդկային
աս ու ան քմայքին համար:

Ամուր ու դրական կրթութիւնն է որ պիտի տայ
մարդու տիրական բարձրութիւն մը ու ազատէ
զանի ստրկական այն տխուր վիճակէն, որուն բը-
նականաբար ենթարկուած են տգէտները եւ կամ
աւելի ճիշդը մեր վարժարաններու արտադրած
հէգ արարածներու պէս մարդ-ապրանքները:

Ծնողք ենք, կը ծնինք, աշխարհի աղաղակին
վրայ աղաղակ մըն ալ կաւելցունենք, բայց եկուր
տես որ այդ անմեղ էակին համար չենք պատ-
րաստեր ճանքայ մը, որ տանի հասցունէ զանի այդ-
տիրական բարձրութեան ու անոր կեանքը քաղց-
րացունէ, որչափ որ հնար է:

Հոռու իմաստակներու ճանկին կը յանձնենք
զանի, որ վարակուի ու ինքն ալ իր կարգին վա-
րակելով ուրիշները, հայ ընկերութեան աղէտը
յաւերժացնէ դարէ դար:

Զէ՛, ծնողքին պարտքը մինակ ծնիլը չէ՛. այդ
պարտքին բնազդային գիտակցութիւնն ունին
նաեւ կենդանիները: Մարդ-ծնողքին պարտքը՝ իր
զաւակը հասցունելուն մէջ կը կայանայ այն մտա-
ւոր վիճակին, որ մարդուն՝ վայելելու իրաւունքը
կուտայ ինչ որ կայ տիեզերքին մէջ մարդկային
բարօրութեանը սահմանուած:

Ծնողք ենք, շատ մը սեփականութիւններ ու-
նինք. կովեր, այգիներ ու զաւակներ: Ամեն օր
կերթանք ախոռը տեսնելու համար թէ կովը լաւ
դարմանուած է. եւ կամ այգին՝ հասկնալու հա-
մար թէ աղէկ մշակուած է. բայց՝ Աստուծոյ սի-
րուն, ըսէ՛ք, Պուրկարահայեր, ե՛րբ կերթանք մեր
վարժարանները տեսնելու համար թէ մեր զա-
ւակներու բարոյական խողխողումը ինչպէ՛ս տեղի
կունենայ. կերթա՞նք նոյն իսկ սա քննական զա-
ւեշտին պատրանքը տեսնելու:

Օ՛, հօ՛: Որի՞ մտքէ կ'անցնի ատանկ բաներ, հե-

րիք է ոչ մրցանակաբաշխութեան հանդիսին ներկայ գտնուելով, կը տեսնենք քանի մը հաճելի խաբէութիւններ և ձեռքերնիւ պարզելով մեր վարժապետներուն դրապէս նուիրագործած կըլլանք անոնց կատարած ահաւելի դերը:

Ու մենք կը դառնանք ամենէն հրէշ դերակատարները մեր սերունդին բարոյական փրճացումին:

ԾԱՆՕԹ

ԱՉԳԱՅԻՔ

Բարիզէն միշտ կը գրեն. — «Մարտիկայէն որբաւէր Թրանսալի մը նուիրած է 2000 ֆր. որով Տ. Արշակ Զոպանեանի ի նպաստ Հայաստանի որբերուն կազմակերպած ցերեկոյթին (մաքիմէ) զուտ հասոյթը 4000 ֆր. ը կանցնի »:

— Իւնիօն ապահովագրական ընկերութեան թուրքիոյ ընդհ. գործակալ Տ. Սիմօն Գայսէրլեան իր գլխաւորեակին մէջ յանուն Ազգ. Հիւանդանոցի հաստատուած գանձանակի տարեկան հասոյթը 4000 դրուշ յանձնէր է Հոգաբարձութեան: Անցեալ տարի ալ միևնոյն եղանակաւ կարեւոր գումար մը յանձնած էր:

— Ս. Լուսաոբշի տօնախմբութեան օրը Հայ Հռովմէականաց Պատրիարք Էմմանուէլեան արքեպիսկոպոսի հրտմանաւ՝ առաջին անգամ ըլլալով Պատարագի միջոցին Ողջոյն տրուեր և Պատարագէն ետքն ալ Մաս բաժնուեր է:

— Ղաւանափոխական շարժումները միշտ հաշիւի մը արդիւնք են եւ ոչ համոզման: Այս մասին կարելի է գտնել բազմաթիւ օրինակներ՝ որոնց վրայ հատ մըն ալ կաւելնայ այսօր. — քահանայ մը՝ որ դաւանափոխ կըլլայ քիչ մը չտփաշանց տարօրինակ պարագաներու մէջ: Խնդիրը Պէլէնցի Ստեփան քահանային վրայ է, որուն ան հաճոյ ընթացքին համար Կիլիկիոյ Կաթողիկոսական Տեղապահ Տ. Կիրակոս Սրբազանի բողոք եղած էր եւ Կրրակոս եպիսկոպոս ալ յիշեալ քահանան Սիս հրաւիրած էր: Տ. Ստեփան մերժե-

լով Տեղապահին հրամանը, Պէլէն գտնուող Հայ Հռովմէականաց վարդապետին հետ Իսկէնտէրուն գացեր եւ Թրանսիսկեաններու դիմելով դաւանափոխ եղեր է:

— Այս տարի Մոսկուայի համալսարանին իրաւաբանական բաժնէն շրջանաւարտ ելած են 12 կովկասցիներ:

— Բերայի Էսայեան վարժարանը այս տարի 12 շրջանաւարտ աշակերտուհի ունի, առաջիկայ տարի ալ 13 շրջանաւարտ մանչեր պիտի ունենայ:

— Նպաստից Յանձնաժողովը նկատելով որ Գաւառական Որբանոցներու հոգաբարձութեանց պաշտօնին տեւողութեան համար որոշ պայմանաժամ մը չէ սահմանուած, յետ այսօրիկ Հոգաբարձութեան պաշտօնը միայն մէկ տարի որոշեց: Ուստի նոր ընտրութիւն կատարելու համար շրջաբերականներ պիտի ղրկուին:

Վիճակի մը կողմէ առաջարկուած էր կարօտելոց ի նպաստ ղրկուած գումարէն մաս մը սահմանել տեղական ազգ. հաստատութեանց պէտքերուն: Յանձնաժողովը այս առաջարկութիւնը միաձայնութեամբ մերժեց եւ որոշեց սոյն օրինակ պարագայից մէջ յանձնարարել որ կեդրոնէն ղրկուած ու եւ է նպաստ անվրէպ որոշեալ նպատակին սահմանուի, եւ երբեք չեղում տեղի չունենայ, նուիրատուներու վստահութիւնը չխախտելու համար:

ՏԵՂԱԿԱՆ

— Ծիլիպէն կը գրեն թէ տեղւոյն ազգ. վարժարանաց հոգաբարձութիւնը խմբովին հրաժարեցուցած է վարժապետական մարմինը:

— Այս գիշեր տեղւոյս Սայէտինէնիէի՝ որահին մէջ ի նպաստ Հայաստանի որբերուն ներկայացում մը պիտի տրուի անձնուէր երիտասարդաց խմբին կողմէ:

— Հայկական կրթարանի վիճակացոյցներու բաշխման հանգէսը վաղը, կիրակի ժամը 2¹/₂ին պիտի կատարուի Սայէտինէնիէի սրահին մէջ:

ՅԱԽԱԼԻ ՍԻԱԼՄՈՒՆՔԻ ՄԸ ԴՈՎԵԼԻ ՎԱՆՃԱՆԸ

Ասկէ մէկ ու կէս տարի առաջ տեղացի բարեկեցիկ Պուլկարի մը տունէն 70-80 ոսկի արժողութեամբ տղամանգեղէններ պարունակող պայուսակ մը կը գողցուի: Տնեցիք՝ իրենց կասկածելի երևցող մէկ քանի եկող գացողները հարցաքննելէ վերջը, բարեկեցիկներու սովորութեան համեմատ, կը ծանրանան տանը սպասուհիին վրայ ու զայն բաւական նեղելէ ու յանդիմանելէ ետքը խայտառակաբար տունէն ալ կը վռնտեն: Խեղճ պուլկար աղիկը այն օրէն մինչև այսօր տանը մէջ փակուած՝ վշտերով կընկճուի, չը յանգգնելով մէկուն երեսը նայելու, վասն զի բարոյապէս մեռած էր:

Տան տէրն ալ, առանց տարածայնելու իր այս կորուստը, մէկ քանի կարեւոր տեղեր իմացնելէ ետքը յատուկ դիտողներ կարգած էր որոնք միշտ սպասուհիին կը լրտեսէին:

* *

Անցեալ շաբթու, հինգշաբթի գիշեր, հայու հարսներէ մը առթիւ Սանդրալի սրահին մէջ ընտանեկան հանդէս մը սարքուած էր ուր հրաւիրեալ էին Հայ և Պուլկար բարեկամ ընտանիքներ, ծոխ հագուստներով և զարդերով պճնուած: Հրաւիրեալներու մէջ էր նաև ազամանգեղէնները կրտսերնոց ընտանիքը որ սթեպակի մը մէջ նստած՝ պտերուին կը հետեւէր: Յանկարծ տիկինը զարմացական ճիշդ մը կ'արձակէ և ամուսնոյն մասնանիշ կընէ հայ գերձակուհի օրիորդ մը որ քաջիկ կը խաղար և որու գլխուն վրայ կը փայլէր իր կորուսածներէն ազամանգեղայ գնդասեղ մը: Ամուսինն ալ այդ տեսարանէն ափ ի բերան մնացած, առանց աղմուկի, կամացուկ մը կերթայ նոյն գիշերը Սանդրալի սրահին բարեկարգութեամբ հսկող Պ. Ոստիկանին կիսացնէ եղբւրթիւնը, որ իրեն լուրձիւն կը պատուիրէ ու մինչև վերջը աչքէն չը վրիպեցնելով օրիորդ գերձակուհին, մեկնելու պահուն, ամենայն բողբոջութեամբ կը մօտենայ անոր ու կը խնդրէ որ՝ մէկու մը ցոյց տալու համար քանի մը վայրկեան իրեն յանձնէ գլխուն վրայ կրած գնդասեղը: Դերձակուհին կը խռովի ու եղած առաջարկը կը մերժէ, այն ատեն Պ. Ոստիկանը մի քանի հարցումներ կուզէ, որոնց տրուած հակասական պատասխաններէն կը պարտաւորի ձերբակալել օրիորդը, որ նոյն Պուլկար ընտանիքին տունը երթեկող վստահելի անձնաւորութիւններէ մին կարծուած է եղիր:

* *

Այն պահուն, երբ օրիորդ գերձակուհին քաջաբանութեամբ մէջ իր գործած յանցանքը կը քաւէր, անշուշտ յիշելով թէ «Չիք ինչ ծածուկ որ ոչ յայտնեցիր», ան-

դին, անարգութեամբ, վռնտուած, վերջապէս բարոյական մահուամբ պատժուած սպասուհին ալ յատկապէս զորհուած հրաւիրեալներու միջոցաւ կառքի մը մէջ զրուած՝ նոյն բարեկեցիկ ընտանիքին տունը բերուած էր, ուր տէրն ու տիրուհին ներողութիւն խնդրելով գործնականապէս կը դարձան իրենց տնակը:

Իցի՛ւ թէ այսօրինակ ամեն ցաւալի սխալմունք ասանկ ալ գովելի վախճան ունենան:

O.

ԿԸ ԿԱՐԾԷՔ ԹԷ

ԱՆ Տ. Ս. Թ.

Կը կարծէ՞ք թէ ամեն գլխարկի տակ չէնք չնորհք մարդ պտնուի:

Կը կարծէ՞ք թէ ամեն բանի խառնուողները բանէ գործէ հասկնան:

Կը կարծէ՞ք թէ ամեն ընթերցող իր կարգացածը հասկնայ:

Կը կարծէ՞ք թէ ամեն շղթայ իր ծայրը ժամացոյց մը ունենայ:

Կը կարծէ՞ք թէ բանը գործը ձգելով ամեն գործի խառնուի ուզողը կարճա՛րիտ չըլլայ:

Կը կարծէ՞ք թէ միեւնոյն հսկաւէ եղողները մէկզմէկ սիրեն:

Կը կարծէ՞ք թէ ամեն գլուխ լեցուն (տօլղուն չի հասկնաք) եղած ըլլայ:

Կը կարծէ՞ք թէ խաչագողութիւնը պաշտպանողը ժողովուրդին քով յարդի ըլլայ:

Կը կարծէ՞ք թէ խաչագողը պատժել չուզողը անոր յանցանքին մեղսակիցը չըլլայ:

Կը կարծէ՞ք թէ կեղծարար մը գիրքը փոխելով իր բնաւորութիւնն ալ փոխած ըլլայ:

Կը կարծէ՞ք թէ անբարոյականին աշակերտողը անբարոյական դաստիարակութիւն մը առած չըլլայ:

Եթէ այս ամենը ասանկ կը կարծէք, ներեցէք որ ըսեմ թէ շատ ողորմելի արարած մ'էք:

ՋՈՒԹԱԿ

Ա.ՁԻ

Պատիւ ունիմ ծանուցանել արգոյ հասարակութեան թէ յանձնակատարի կանոնաւոր երթեկ մը հաստատած ենք ընդ մէջ Վառնա, Էւմպա, Բլէֆա, Սօֆիա և Ռուս-ճուքի ու պիտի գոհացնենք մեր Պատ. յաճախորդները ամեն կերպով: Կեղրոնատեղին է Տ. Ա. Զարպհանէլեան գրատունը Վառնա:

ՆՀԱՆ ՍԱՐԱՓԵԱՆ

Պ Տ Ո Յ Տ

ԲԱՐԻՋԻ ԱՐՈՒԵՍՏԱՀԱՆԴԵՍԻՆ ՄԷՋ

6

Սերպիոյ տաղաւարը.—Առաջին անգամ իրենց դռներն հանրութեան առջև բացող տաղաւարներու շարքին մէջ կը գտնուի նաեւ Սերպիոյ գեղեցիկ տաղաւարը որ կը բարձրանայ Գէ տը Օրոէի և Ալմայի կամուրջին կազմած անկիւնին միջև, և սկզբնակէսը կը ձևացնէ օտար տաղաւարներուն որք Սէնի եղերաց վրայ հմայքներու տողանցութիւն մը կը կազմեն: Բիւզանդական ուճով սիրուն շէնք մը, որուն կեդրոնը պսակուած է լայնանիստ գմբէթով մը, այս գմբէթին երկու կողմերը չորս ուրիշ գմբէթներ ալ կան, աւելի փոքր ծաւալով, որք շէնքին չորս հաւասար բաժանումները կ'անջատեն իրարմէ: Փլխաւոր մուտքին կողմը, դուռն ցցուած քանդակներու միջև կ'երեւի հարթ տանիքով սիւնազարդ գաւթակ մը, որ Բիւզանդական եկեղեցիներուն նախագուռը կը ներկայացնէ: Պալատին արտաքին զարդարանքը շատ հաճելի տեսարան մը կ'ընծայէ. պատերը շինուած են սրբատաշ քարերով որոց հետ ճաշակաւոր կերպով խառնուած են աղիւսներ: Իսկ գմբէթները ներկուած են այնպիսի գոյնով մը որ տեսնողը առաջին անգամ պղինձ կամ արոյր կը կարծէ: Շէնքին ներքին կողմը զարդարուած է գեղեցիկ որմանկարներով: Կեդրոնը բաց ձգուած է անցուղարձի դիւրութեան համար, իսկ երկու թևերուն վրայ մասնաւոր բաժանումներ գրուած են սերպ կառավարութեան պաշտօնական ցուցահանդէսը և մասնաւորներու կողմէ զրկուած աղգային արտադրութիւնը: Պաշտօնական ցուցահանդէսին մէջ աչքի կը զարնեն զանազան հանքերու նմոյշներ, որք այցելուին դադափար մը կուտան մասնաւորապէս սերպիական հողին պարունակած ոսկիի և արծաթի հանքերուն առատութեան վերայ: Իէմը՝ ապակեդարաններու մէջ ի ցոյց դրուած են Բրակույէվացի զինուորական արուեստանոցին արտադրութիւնները, որք զանազան տեսակ պատերազմական մեքենաներու եւ ռազմամթերքներու կը վերաբերին: Հեռուն՝ ծխախոտ և երկրագործական զանազան բերքեր տեղական բոլոր տեսակներով: Բայց ամէնէն աւելի ուշագրաւները են Բերոյի գեղանկար գորգերն եւ աղգային տարազները, ընդհանրապէս պոռոտ գոյներով և արծաթով ու ոսկիով բանուած, որք սերպ տգեղ և գեղեցիկ սեռին արդուզարդին վրայ ճշմարիտ գուղափար մը կուտան: Սոյն հագուստներ անցուած են մանրֆէններու (փայտէ կամ մոմէ մարդ) վրայ, որոց ամբողջութիւնն արուեստագիտօրէն կարգաւորու-

թեամբ մը՝ աղգարանական շահեկան ցուցահանդէս մը կը կազմէ:

Մասնաւորաւոր տաղաւարը.—Մալաքոֆի հրապարակին մէկ կողմը, Մանժաքա Միատանայի պալատին ոչտարակներուն հետեւողութեամբ շինուած ճերմակ աշտարակի մը վրայ՝ իր փառաւոր թեւերը պարզած է ոսկի արծիւ մը, Վորոմահէրին, որ զօրութեան թռչուն կը նշանակէ: Բատամաներու հարստութեան սոյն խորհրդանշան Մատակաւքաբէն մինչև Բարիզ բերուած է՝ Արուեստահանդէսին մէջ յատուկ տեղ մը դրուելու և խաղաղութեան այս հանդէսներուն մէջ, ինչպէս սովորական է ըսել, Ֆրանսայի յաղթութիւնները փառաւորելու հռովմէական տեսակ մը սնապարծութեամբ: Մատակաւքաբի տաղաւարը Թանանարիվի կառավարութեան ճարտարապետին միջոցաւ շինուած է եւ գեղեցիկ համայնապատկերներու միջոցաւ կը պարզէ 1895ի կռիւներուն գլխաւոր տեսարանները, արքունական պալատը, թագուհին անձնատուր ըլլալու պարագաները ևն: Ուշագրութեան արժանի են նաեւ մալկաշ փոքրիկ գիւղեր, իրենց գլխաւոր փողոցներով, ինչպէս նաեւ ապակեդարաններու մէջ զետեղուած հանքային զանազան նմոյշներ եւ թանկագին քարեր:

(Շար.)

8.

Ս Ի Ր Ա Յ Ի Ն Կ Ա Յ Ծ Ե Ր

Ծ Ե Ր Ո Ւ Կ Ը

Շարժումս՝ Գ լ կ լ մ լ

Առաւօտ իրկուն,

Երթաւ գաւ ձեզ մօտ

Ծունգերով կըքոտ:

Հերքս եւ երկոյն,

Սիրքս սրտիմուն,

Հոգիս խրոնովս՝

Սիրով միշտ փաղցած:

Աղջկանց ֆեմոշ

Գեղեցիկն ի յոշ,

Փոքրս եւ ի եւր

Ման գալ թեւ ի թեւ:

Մէկին փայտիսյան,

Միսին սաւ գգունս,

Ծունգ ի ծունգ նստիւ,

Յուգեւ ու յուգիւ:

Շուրջս հոստեւ

Որ շաւ փայտեւ

Կանանց գեղանի

Բոյնս պաշտելի:

Ինչ փոյթ որ ըսեն
«Սա ծեր է արդէն»
Ձմեռուան ցոյսին
Վարդեր կը փրփրեն»

Աղաւաղ դստեր,
Ձիւ մի մեղադրե՛ք.
Հիւժուած արսիւ մեջ
Հրդեհ կայ անշեջ:

Յ. ՎԱՀԱԳՅԱՆ

Ծ Ի Ծ Ա Ղ

ԱՆՈՒԱՆ ՏԱՐԵԴԱՐՁԻ ԱՌԹԻԻ

Մեր միջնակարգ դասուն մէջ անուան տօնա-
խմբութիւնները՝ շատ անգամ ենթակային «ի
նեղութեան իմում» կարգալտալով մեծ մտահոգու-
թիւն կը պատճառեն անոնց: Մեր ընտանիքները
իրենց նշանաբան ընտրած են անպատճառ «սեւը
ներս ճերմակը դուրս» դրութեան հետեւելու, ու
վերջը չը մտածելով, իրենցմէ քանի մը պատիկ
աւելի ունեւորներուն չըրած ծախքերը իրենք կը-
նեն անուան տօնախմբութիւններու առթիւ, յա-
ջորդ օրն ալ կը սկսին մտածել ու հառաչել:

Հետեւեալ խօսակցութիւնը որ տեղի ունեցած
է անցեալ չաբաթ առաւօտ Դրդ թաղի տան մը
մէջ, «պացոյց» մըն է մեր այս ըսածներուն:

—Մ'օ Դիրգոր, եավրում, կերթա՛ս կոր.
անունովդ ապրի՛ մնաս Աստուած շատ տարիներու
հասցնէ:

—Ողջ ըլլաս, ք'ա մարիկ, ծառքդ պաղներու
է ամա. հիմա ուշ մնացի:

—Ձարար չունի օղում, ետքը պագ. ամա
ճանըմ օրթտի. ճարը նայէիր տէ իրիկունը գա-
լիք միսափիրներուն առջին ամօթով չի մնայինք.
զէրէ հիշ պան մը չունինք:

—Քա տուն ինչ կըսես կոր. պիղ իւշպուշու-
ղուն եօլունա պագըօրը: Եկողին խաճէ մը, լմն-
ցաւ դնացի:

—Վո՛յ ճունը գլխուս, զէհէր էրիկս մեռեր
է տէ սղաւոր եմ. խենթեցա՛ր եավրում. լէյլէկին
նետած եավրուն ես. պօյաճիին տղուն խտա՛ր ալ
չի գաւ, անցածները անունին գիշերը գիտես քի
հարունիք բռներ էր. աշխարհք սէյիրին կեցաւ:
Նեմղուրենց թախումը գայ նէ՛ խահվէյով ըլ-
լալիք բան է:

—Է՛յ, երկան մըներ. ինչ պէտք է նէ ան
ըսէ:

—Հա՛, աֆէրիմ օղում, սանկ եօլի եկուր.
տող պիտի ելլայի նէ՛. չիչէ մը մանուսքէի քօն-

եաք կառնես, քիչ մըն ալ ֆըր կըլսէ կըսեն կոր
ան շէքերէն կառնես, քանի մը օխա ալ արմուտ
կառնես, լմնցաւ գնաց: Էյէր արխատաշներդ ալ
պիտի բերես նէ՛ ան վախիթ պակսութիւննիս շատ
կըլլայ:

—Հա՛ քա մարիկ, աղէկ միտքս ձգեցիր, քա-
նի մը անպապներ պիտի գանք ըսին, հիմա անոնց
համար ալ ըրտխի առնելու է:

—Մինակ ըրախ՛, գինի ալ պէտք է, անկէց
սողա՛ քիչ մը խահվէ իլէն թէնէքէ մը կաղ
առնէիր. իչկիր համար անպապճա ո՛ր մէզէներէն
հազ կընէք նէ՛ անկէ կառնես:

—Կէնէ շախա շուխա գործը մէկ երկու հա-
յուր զրուշին գուռն է. ինչ ընելու է. առ անուն
ալ ուրկէց գտեր դրեր են ինձի. եաքսան պիր
թիւրլիւ, եաքմազսան պիր թիւրլիւ, էթրաֆ թարա-
ֆըդ երեսդ վար կառնէ. նանլէթ ըլլայ ասանկ
բանին:

—Աս տեղ ատէթ է քի տէրտէրը շնորհաւո-
րի կուգայ, անոր ալ բան մը տալու է:

—Փրանք մը ձգեմ տէ տուր:

—Մեղայ, եավրում, ֆրանքը քիչ է. մարդը
աստար տեղը բայթոնով կուգայ կոր. կէնէ իրեք
ֆրանք ծառքը դնես պիտի քի՛ մէկը բայթօնին
տայ նէ՛ երկուքն ալ իրեն մնայ:

—Տէր Աստուած դուռն ողորմիւ:

—Փայտա ունի՛ եավրում. ատէթ է եղեր, պի-
տի ընես: Հա՛ նայէ պիտի մոռնայի. չորս հինգ
հօտ ըրախի խատէխ առնէիր, զէրէ հիշ չունինք:
Բան մըն ալ պիտի ըսեմ ամա, ճանըմ օրթտի չի
սրգողիս: Մուսալլային տաճիկ ախտէրը բաստըխ
պօյասի կը ծախէ. հինգ տիրէմի խտար առնէիր,
ամա աղէկէն ա՛ռ, չիւնքիւ բէք պէքիէ առ գիշեր.
ամա սախըն հօրկանդ պան մը չըսես ծ'օ:

—Քա՛, բաստըխը ինչ պիտի ընես. ինքուինե-
րդ տահա թափած չեն. հա՛, հասկցայ, աչքերուդ
սիւրմէի համար. կէնէ սիւս վար. քովի հաճի ֆըշ-
ֆըշ աղան ալ պիտի գ'այ:

—Սուս ծօ, շան սուրաթ, խենդ լախըրտըներ
չուզեր. իս դող մի հաներ. Քա ճանըմ օրթտի
սախըն խաղալ մաղալ չի հանես օրթան. կէնէ
Բառնիկ աղային աղջիկները կըլլան մեր սէպէ-
պով կը հիւընդնան. կիտես եա՛, անցած տարուա-
նը, ան արխատաշ օլաճախներդ տուն ալ պարա-
պար եա՛, նէյիսէ, խաղալու վախիթնիդ սխմրտե-
լով, կամթտելով աղջիկներուն վայնի վրան պե-
րեր էիք:

—Սման դուն ալ մարիկ, պօշ լախըրտը
մ'ըներ. անոնք սխմող մամուլ չիկար, հէմ մէտէ-
նին խաղալ չէր ուզեր նէ թող չը խաղային, ես
կիտեմ եա՛, անոնք ամիս մըն է քի հալըր կըլլան
կոր. առ գիշեր կը տեսնաս, խաղալու ծան լսած-
նուն պէս ինտո՛ր կը ցատկեն:

—Սանքի իրաւ ես ծօ՛, ես ինչ կ'իտնամ, մեր վախիթը առանկ պաներ չիկար. Հա՛, տեսա՞ր, կ'իտեմ քի միտքս պան մը կայ ամա պիւր թիւր-լիւ խելքս վրայ չի գար կոր քի լսեմ, թէյղէիդ տունէն իրիկուան հացը հոս պիտի ուտեն, նա՞սըլ պիտի ըլլայ, ֆասուլեայով միսէն պաշխա պան չունինք, առտուն հօրդ ըսի նէ, ի՞նչ ընեմ, անու-նը իմա չէ եա՛, տղսւդ ըսէ ըսաւ:

—Հասկցայ, քիչ մըն ալ կ'ենամ նէ, ասօր անունս է տէյի տարուըչէիս փատը քէօմիւրն ալ ինծի պիտի առնե՛լ տաս, անունս է տէյի առջի իրիկուընէ կերակուրի գալն ի՞նչ պիտի ըլլայ, քիչ մըն ալ կ'ենանք նէ մալը հինգ հարիւրի պի-տի նստի.

—Ձարար չունի, ես՛վրում, թօքը տարին հեղ մըն է. տուրը ճիւմպիւշի կայ նէ թէքը չիֆթը չէք նայիր կը խարճէք. էյ, մեքն ալ հոգի չու-նի՞նք, ասանկ սէպէպներու կը նայինք քի քիչ մը օրի երես տեսնանք, առջինէկ լուսահոգի երիկա հախ ունէր, կըսէր քի մարդ մը ծնած օրին ու մե-ռած օրին միւրվէթները չը տեսնար, մինա՛կ կարգուած օրը իլէն անունին օրը ուրախութեան ցնծումի երես կը տեսնայ: Էյ, անունին օրն ալ, շիտակը ըսելով, չը տեսնուած պաներ կընէր. քա՛ ինք ալ պաշխա պան էր: ճիւմպիւշը սիրող շար-խատա մարդ մըն էր. հիմակուան հօրկանդ պէս չէր. վո՛ւյ, կուռք կը նմանի:

Ձերկարենք, թէեւ պարոն Գրիգոր նոյն իրի-կունը «թէքին չիֆթին» չի նայելով բաւական ծախսեր ու մօրն ալ պարտը տեղը ինկեր էր, բայց հետեւեալ օրը հաշիւին նայելով, շատ զղջացեր էր. այլ ինչպէս գիտենք, վերջին զղջումը միշտ անօգուտ է:

Օր մը Մ. Ժուան ասպետը Բալէ Բուայալի խաղարաններէն մէկուն մէջ 500 սսկի շահելով, գրպանը դրաւ ու կը պատրաստուէր մեկնելու, նոյն պահուն, խաղատուներուն մէջ սլքտացող անկուտի-ներէն անծանօթ մը մօտենալով ըսաւ.

—Կ'աղչեմ պարոն, վերջին աստիճան պէտք ունիմ, ինծի հարիւր ֆրանք փոխ տուէք:

—Շատ աղէկ, սիրելի պարոնս, պատասխա-նեց ասպետը, եթէ ըսես ինձ թէ անունս ի՞նչ է, անմիջապէս կը համրեմ գրամը:

Խնդրարկուն շուարած կը կենար, որովհետեւ չէր գիտեր անունը. ասպետը ժպտելով շարունա-

կեց. —Կը տեսնէ՞ք սիրելի բարեկամս, ձեր պարտքը վճարելու համար ի զուր պիտի փնտռէք զիս:

Ծանծաղամիտին մէկը օր մը գիւղէ մը ան-ցած միջոցին՝ իր գործովը զբաղած գիւղացիի մը մօտենալով մէկ քանի պարապ հարցումներ կը-նէ: Գիւղացին չուզեր պատասխանել. ասօր վրայ ծանծաղամիտը բարկացած կը գոչէ.

—Է՛հ, կերևի թէ այս գիւղին մէջ էջեր կը բնակին:

Առ այս գիւղացին կը պատասխանէ. —Ո՛չ պա-րոն, թէեւ շատ էջեր կուգան հոս, բայց չեն մը-նար, կանցնին կերթան, ինչպէս որ հիմա դուք ալ անանկ պիտի ընէք:

Վարժարանի մէջ.

—Ըսէ՛ նայինք Պ. Դէօրգ, 14 խնձորը կըը-նա՞ս հաւասարապէս բաժնել 13 հոգիի.

—Այո՛:

—Ի՞նչպէս

—13ը կուտամ 13 հոգիին, մէկ հատն ալ ես կուտեմ:

ՅԵՐԵՐԻՔ

(Աժանս Բոժոժիկ եւ Ընկ.)

Սըթմա բաւարը

Տեղւոյս մանկապարտիզպանուհին, որուն հա-մար կըսուի թէ ժամանակաւ հաւանքեցի ճարտե-զանութիւն ըրած է, անցած օր պլտիկ ուսանող-ները մօտակալ զբօսավայրը բերաւ ուր գինետան մը մէջ յարեթիւնաի ձայնով զանոնք խաղցունելէ ետքը, անոնցմէ մէկուն ձեռքը պնակ մը տալով ներկայ գտնուող ամեն ազգէ հանգիստականներէն Փառաւ ժողուել սկսաւ, անշուշտ ի պատիւ մերազ-նէից:

Քամիի պոյու

Տեղւոյս տէր պապան անցեալ կիրակի առ-տու տունէն մեկնած ատենը ա՛յնչափ մտաղբաղ էր ո՛ւ կեանքի ուսկումայովը եկեղեցի եկաւ:

Отговорникъ Ж. ИВ. ЖЕКОВЪ
Печатница „Взаимность“ — Варна.